
ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՄԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ, ԵՐԱՆՈՒՐԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հայկական լեռնաշխարհը, գտնվելով Հին աշխարհի քաղաքակրթության ամենանշանավոր օջախում՝ Առաջավոր Ասիայում, չէր կարող դուրս մնալ զարգացման համընդհանուր օրինաչափություններից: Գրավոր աղբյուրներից տեղեկանում ենք, որ Եգիպտոսում Ք. ա. 4-րդ հազարամյակի կեսերին մանր պետական կազմավորումների միացումից գոյացել էին երկու՝ Վերին և Ստորին Եգիպտոսների թագավորությունները, որոնք Ք. ա. մոտ 3000 թ. միավորվեցին մեկ թագավորության կազմում: Միջագետքի հարավում (Շումեր) ևս Ք. ա. 3-րդ հազարամյակի սկիզբը նշանավորվում է իբրև միացյալ պետություն ստեղծելու ժամանակաշրջան. մանր պետական կազմավորումները՝ քաղաք-պետությունները (Էրեդու, Քիշ, Ուրուկ, Ուր, Շուրուպակ և այլն), միավորվում են դրանցից մեկի գերիշխանության ներքո¹:

Հնագիտության տվյալները ցույց են տալիս, որ Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզի դարի (Ք. ա. 4-3-րդ հազարամյակներ) մշակույթն իր զարգացման բարձր մակարդակով համեմատելի է նույն ժամանակաշրջանի միջագետքյան և եգիպտական մշակույթների հետ: Ավելին, այն գերազանցում է մյուսներին իր աշխարհագրական ծավալմամբ՝ Ք. ա. 3-րդ հազարամյակի առաջին կեսին տարածվելով հարավ-արևելքում՝ մինչև Իրանական սարահարթի կենտրոն, հարավ-արևմուտքում՝ Սիրիա և Պաղեստին, իսկ հյուսիսում՝ Հյուսիսային Կովկաս²:

Զարգացման նման մակարդակը, որը հնարավորություն տվեց ոչ միայն միավորելու ողջ Հայկական լեռնաշխարհը մեկ մշակութային գոտում, այլև տարածվելու նման հսկա տարածքում, հազիվ թե հնարավոր լիներ առանց պետականության:

Իսկ ի՞նչ է մեզ հայտնի այդ ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհի մասին:

¹ Եգիպտոսում և Միջագետքում պետականության կազմավորման մասին նեղ մասնագիտական գրականությունից բացի կարելի է կարդալ Հին Արևելքի պատմությունն ընդհանրացնող ամեն մի աշխատանքում (տե՛ս, օրինակ, "История Древнего Востока". Կ. 1-2. М., 1983-1987, հատկապես՝ հատորների վերջում զետեղված մասնագիտական գրականության ցանկերը):

² Հայկական լեռնաշխարհի՝ վաղ բրոնզի դարի մշակույթի և վերջինիս աշխարհագրական տարածման մասին տե՛ս **Mellaart J.** Anatolian Chronology in the Early and Middle Bronze Age, "Anatolian Studies", VII, 1957, **Burney Ch.** Eastern Anatolia in the Chalcolitic and Early Bronze Age, "Anatolian Studies", VIII, 1958, **Խանգաղյան Է. Վ.**, Հայկական լեռնաշխարհի մշակույթն մ. թ. ա. III հազարամյակում, Եր., 1967, էջ 91-94, **Burney Ch., Lang D. M.** The Peoples of the Hills. Ancient Ararat and Caucasus, London, 1971, p. 43-85, **Sagona A. G.** The Caucasian Region in the Early Bronze Age, Part I-III, Oxford, 1984 (և դրանցում հղված գրականությունը):

Շումերական բնագրերի քննական վերլուծությունից պարզ է դառնում, որ Ք. ա. 28-27-րդ դարերի իրադարձությունների կապակցությամբ հիշատակվող Արատտա երկիրը գտնվել է Հայկական լեռնաշխարհում: Հաշվի առնելով վկայության վաղեմությունը՝ անհրաժեշտ է պարզաբանել, թե ինչ տեսակի կազմավորում է եղել այն՝ ցե՞ղ, ցեղային միություն՞ւն, թե՞ վաղ պետական կազմավորում:

Որևէ հասարակական կազմավորում կարող է համարվել պետություն, պետական կազմավորում, եթե այն օժտված է հետևյալ հատկանիշներով (բնորոշումները հանրագիտարանային են).

ա. տարածքի և բնակչության առկայությամբ,

բ. իրավունքով, որով պետական իշխանությունն իր կամքը դարձնում է համապարտադիր, որոշակի շրջանակների մեջ դնում հասարակական հարաբերությունները,

գ. պետական համակարգով, որն իրենից ներկայացնում է պետության կառավարումն իրականացնող մարմինների ու հիմնարկությունների ամբողջություն,

դ. պետական իշխանության սուվերենությամբ, այսինքն՝ ներքին և արտաքին հարաբերություններում գերագույն իշխանության մենաշնորհով, ներքին վարչատարածքային միավորների նկատմամբ գերադասությամբ:

Ըստ թվարկված հատկանիշների փորձենք որոշել՝ Արատտան պետություն՞ւն էր, թե՞ հանրային կեցության այլ կազմավորում (ասենք՝ ցեղային միություն):

Տարածքի և բնակչության առկայությունը: Արատտայի տարածքի տեղորոշման ճշգրտման հարցը մասնագիտական գրականության մեջ քննարկվել է մանրամասնորեն³, ուստի այստեղ կներկայացնենք միայն փաստերից բխող եզրակացությունները: Շումերական բնագրերի քննությունը թույլ է տալիս Արատտան տեղադրել Հայկական Տավրոսով Եփրատի անցման շրջանում և Վանա լճի ավազանում: «Գիլգամեշն ու անմահների երկիրը» բնագրի և արադական (բաբելոնյան) «Գիլգամեշ» էպոսի տվյալների համադրումից պարզվում է, որ Արատտա՝ «անմահների երկիր» (ջրհեղեղից փրկվածների երկիր) էին մուտք գործում Մաշու (Մասու) լեռներով: Այսինքն՝ Արատտայի հարավային սահմանն անցել է Մաշու լեռներով, որոնք հունական և հայկական աղբյուրներում հիշատակվում են Մասիուս և Մասիոն անուններով: Դրանք համապատասխանում են այսօրվա Տուր-Աբդին լեռներին և ձգվում են Հայկական Տավրոսից հարավ:

Շումերա-արադական, աստվածաշնչյան և հայ մատենագրության տեղեկությունների քննական համեմատությունը ցույց է տալիս, որ Արատտան նույնանուն է Աստվածաշնչի Արարատ/դ-ի հետ: Արարատ/դ անվան տակ հին աղբյուրներում նեղ իմաստով հասկացվել է Վանա լճից հարավ գտնվող Արարտու (Նիբուր, հետագայում՝ Ջուդի-դադ) լեռան շրջանը, իսկ լայն իմաստով՝ ողջ Հայաստանը⁴:

³ Արատտայի տեղագրությանը վերաբերող փաստերը, անցյալում հայտնված տեսակետները տեսն **Մովսիսյան Ա.**, Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում (ըստ գրավոր աղբյուրների), Եր., 2005, էջ 16-30, 48-55 (հղված գրականությամբ հանդերձ):

⁴ Տեսն **Մովսիսյան Ա.**, Շումերական աղբյուրների Արատտա երկիրն ու Աստվածաշնչի Արարատը, «Աստվածաշնչական Հայաստան», Եր., 2005, էջ 78-81:

Եթե դրան ավելացնենք, որ միջագետքյան գրավոր ավանդության մեջ Չայաստանը հետագայում հանդես է եկել մեկ հավաքական անվամբ (Արմանի, Նաիրի, Ուրարտու, Չայք), կարելի է ենթադրել, որ Արատտա անունը կարող էր տրվել Չայկական լեռնաշխարհի ողջ տարածքին: Այսպիսով, Արատտան Ք. ա. 28-27-րդ դարերում առնվազն ընդգրկել է Չայկական Տավրոսի, Մաշու և Արարատ/դ լեռների ու Վանա լճի ավազանի շրջանները, չի բացառվում՝ նաև Չայկական լեռնաշխարհի մնացած տարածքը:

Արատտայի բնակչությունը սկզբնաղբյուրներում ներկայանում է «արատտացիներ» և «Արատտայի ժողովուրդ» ընդհանրական անվամբ:

Իրավունքը: Իրավունքը՝ իբրև վարքագծի համընդհանուր պարտադիր կանոնների համակցություն, հնագույն ժամանակներում առաջացել է հավատալիքներից ու սովորույթներից: Նրա ձևավորմանը նպաստել են կրոնը, ազգային ավանդույթներն ու պատմական առանձնահատկությունները: Թռուցիկ վերլուծելով սկզբնաղբյուրները՝ փորձենք պարզել՝ արատտացիների հավատալիքներում ու սովորույթներում արտահայտված է իրավունք, որը պետական իշխանությանը հնարավորություն կտար իր կամքը դարձնելու համապարտադիր և հասարակական հարաբերությունները դնելու որոշակի շրջանակների մեջ:

Հնագույն ժամանակներում մարդկանց համար որևէ մեկի իշխանության տակ գտնվելը պետք է պայմանավորված լիներ կանոնադրական գործոնով, կանոն էլ հավատով (կրոնական գործոնով), այսինքն՝ որ այդ մեկը նշանակված է աստվածների (Աստծո) կողմից և նրանց փոխարինողն ու կամքը կատարողն է երկրի վրա, օժտված է գերբնականությամբ:

Արատտայի քրմապետ-արքայի իշխանությունը պայմանավորված էր կրոնական գործոնով: Բնագրերում նշվում է, որ Արատտայում իշխանության գլուխ էր կանգնած քրմապետ-արքան, ում, ըստ հավատքի, նշանակել էր «բոլոր երկրների և տիեզերքի տիրուհին»՝ մայր դիցուհին⁵: Նա էր, ըստ հավատքի, որոշել «ճանապարհն Արատտայի», իսկ քրմապետ-արքային դարձրել երկրի գերագույն պաշտպանը՝ ընդդեմ արտաքին թշնամու (ռազմական գործոն):

Ռազմատնտեսական գործոնի արտահայտություն կարելի է համարել Արատտայի պետական համակարգը, որին կանդրադառնանք քիչ հետո:

Արատտան բնությամբ թեոկրատական հասարակություն էր, որում ամբողջ իշխանությունը գտնվում էր հոգևոր դասի ձեռքում՝ քրմապետ-արքայի գլխավորությամբ, որն էլ կառավարում էր երկիրը աստվածների անունից: Հոգևորականության իշխելու իրավունքն էին ապահովում նաև հավատն առ Աստված, աստվածներից ակնկալվող բարեհաճությունը: Դրանք արտահայտվում էին հոգևոր ծեսերով ու սովորույթներով: Շունե-

⁵ Տե՛ս **Kramer S. N.** Enmerkar and the Lord of Aratta, Philadelphia, 1952, էջ 19-21, **Канева И. Т.** Шумерский героический эпос как исторический источник. ВДИ, 1964, № 4, էջ 210, **Cohen S.** Enmerkar and the Lord of Aratta, Ann Arbor, 1973, էջ 123, **Vanstiphout H.**, Epics of Sumerian Kings. The Matter of Aratta, Atlanta, 2003, էջ 68-69, The Electronic Text Corpus of Sumerian Literature: Composite Text, Translation, Bibliography (The internet homepage. Faculty of Oriental Studies, University of Oxford այսուհետ՝ ETCSL), 1.8.2.3, տող 220-225:

րական բնագրերի համաձայն՝ Արատտայի տաճարներում «երգվում են սուրբ երգեր ու աղոթքներ», մշտապես կատարվում են «զոհաբերություններ, աղոթք ու պաշտամունք»⁶:

Ավելացնենք նաև, որ աստվածների պաշտամունքը սպասարկող հոգևոր դասի ձեռքում էր կենտրոնացված դատական գործը, մի երևույթ, որն օրինաչափ ու համատարած էր ոչ միայն Յին աշխարհում, այլև միջնադարում:

Պետական համակարգը: Արատտայում պետության առաջին դեմքը քրմապետ-արքան էր: Նրա իշխանությունը, դատելով սկզբնաղբյուրների տեղեկություններից, տարածված էր ինչպես հոգևոր, այնպես էլ աշխարհիկ իշխանության ոլորտներում և որևէ սահմանափակում չուներ: Սա նշանակում է, որ գործ ունենք պետական կառավարման թեոկրատական (աստվածապետական, կրոնապետական) մոդելի հետ: Աստվածապետության բնորոշ հատկանիշներն են՝

ա. հոգևոր և աշխարհիկ իշխանությունների կենտրոնացումը հոգևորականության ձեռքում,

բ. հոգևոր առաջնորդին է պատկանում գերագույն իշխանությունը, որը ճանաչված է որպես Աստուծոց նշանակված գերագույն առաջնորդ («քրմապետ-արքա», «Աստուծո փոխարքա», «քահանայապետ», «կենդանի Աստված», «Աստուծո փոխանորդ» և այլն),

գ. պետական գործունեությամբ զբաղվում են հոգևորականները,

դ. օրենքով պետության գլուխ կանգնածը «Աստուծո (աստվածների) կամքը կատարողն» է:

Տիրակալին կից գործում էր Ավագների ժողովը, որը գումարվում էր երկրի համար առավել նշանակալի հարցերը քննարկելիս: Ժողովում նախագահում էր քրմապետ-արքան, որի ձայնն ուներ վճռորոշ նշանակություն: Այն հրավիրվում էր տիրակալի կողմից, իրավասու էր լուծելու արտաքին քաղաքականության և ռազմական ղեկավարման (գուցե և այլ ոլորտներին վերաբերող) հարցերը: Բնագրերից մեկի համաձայն՝ քննելով Շունները նվաճելու առաջարկը՝ Արատտայի Ավագների ժողովը հավանություն չի տալիս հարցին, սակայն քուրմ-արքան հանձնարարում է իրականացնել արշավանքը և տրամադրում միջոցներ: Այսինքն՝ տիրակալի ձայնն ուներ վճռորոշ նշանակություն⁷:

Ավագների ժողովի հետագա զարգացումը Հայաստանում պետք է համարել Հայաստայի (Ք. ա. 15-13-րդ դդ.) Ավագների ժողովը⁸, Վանի թա-

⁶ Kramer S. N. նշվ. աշխ., էջ 20-21, Канева И. Т. նշվ. աշխ., էջ 208, 211, Vanstiphout H. նշվ. աշխ., էջ 62-63, 70-71, ETCSL, 1.8.2.3, տող 250-252:

⁷ Steu Berlin A. Enmerkar and Ensuhkešdanna, Philadelphia, 1979, էջ 48-51, ETCSL, 1.8.2.4, տող 140-169: Գիլգամեշին փառաբանող «Գիլգամեշն ու Ագան» բնագրում (Kramer S. N. Gilgamesh and Agga, "American Journal of Archaeology", LIII, 1949, էջ 1- 18, Канева И. Т. Шумерский героический эпос как исторический источник, ВДИ, 1964, № 3, էջ 260-267, ETCSL, 1.8.1.1) Ավագների ժողովից բացի՝ հիշվում է նաև երկրորդ՝ «քաղաքի տղամարդկանց ժողովը». բնագիրը վերծանող Ա. Ն. Քրամերը կառավարման այս համակարգը կոչում է «առաջին երկապլատ պառլամենտ» (տես Крамер С. Н. История начинается в Шумере. М., 1965, էջ 41-46): Արատտայում նման երկրորդ ժողով չի հիշատակվում. առկա է միայն գերագույն քրմին կից գործող բարձրագույն խորհրդակցական մեկ մարմին՝ Ավագների ժողովը:

⁸ Steu «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, եր., 1971, էջ 201, «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», հ. 1, եր., 2007, էջ 81-82 (համապատասխան հղումներով):

գավորության (Ք. ա. 9-7-րդ դդ.) արքային շրջապատող «խորհրդականներին»⁹, և Մեծ Հայքի Աշխարհաժողովը՝ հայ ավագանու բարձրագույն խորհրդակցական մարմինը¹⁰:

Շումերական բնագրերը կարևոր տեղեկություն են պահպանել Արատտայի մի պաշտոնյայի՝ «կառավարչի»¹¹ մասին: Նրա իրավասությունները վերաբերել են երկրի կյանքի տնտեսական ոլորտին: Այդ պաշտոնի հետագա զարգացման ձևը, թերևս, Մեծ Հայքի «հազարապետություն» գործակալությունն է¹²:

Արատտայում հիշատակվում են երկրի տնտեսությամբ զբաղվող պաշտոնյաների երկու խումբ՝ «վերակացուներ» և «հարկահավաքի մարդիկ»¹³: Ի դեպ, «հարկահավաքի մարդիկ» անվանումն ակնհայտորեն հիշեցնում է Վանի թագավորության պետական պաշտոնների անվանումները՝ «ցանքի մարդիկ», «հաշվի մարդիկ», «դրամների մարդիկ»¹⁴ և այլն: Հավանաբար, սրանք էլ հիմք դարձան Մեծ Հայքի արքունի գործակալությունների ձևավորման համար: «Հարկահավաքի մարդկանց» մասին հիշատակությունը վկայում է պետական հարկային քաղաքականության (հարկային տեսչության) առկայության, իսկ վերակացուները՝ հասարակական աշխատանքներում պետական վերահսկողության մասին:

Կարևոր է նաև, որ Արատտայում գործածվել է չափ ու կշռի միավոր՝ «մինա»¹⁵:

Պետական հիմնարկությունների մեջ առաջին հերթին պետք է նշել արքունիքը, որը հիշատակվում է բազմիցս: Այն գտնվում էր երկրի նույնանուն մայրաքաղաքում: Ընդ որում, պետք է շեշտել, որ շումերական բնագրերը հիշատակում են Արատտայի *պարսպապատ* մայրաքաղաքը¹⁶: Բացի արքունիքից՝ հիշվում է նաև Արատտայի քրմապետ-արքայի «լուսե կացարանը»: Որպես պետության կառավարումն իրականացնող հիմնարկներ՝ կարևոր դեր պիտի խաղային տաճարները. հոգևոր դասի ձեռքում էր գտնվում ողջ իշխանությունը:

Եվ վերջապես, պետության տնտեսական քաղաքականության իրականացման կարևոր հիմնարկություններ էին շտեմարանները: Բնագրերում հիշվում են «արքունի» և «մեծ» շտեմարաններ. նման բնորոշումների առկայությունից հետևում է, որ երկրում բավական շատ էին շտեմարանները:

⁹ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, էջ 346:

¹⁰ «Աշխարհաժողով»-ի մասին մատենագրական տեղեկությունները տե՛ս **Մանանդյան Հ.**, Երկեր, հ. Դ, Եր., 1981, էջ 249-252:

¹¹ Տե՛ս **Berlin A.** նշվ. աշխ., էջ 48-49, ETCSL, 1.8.2.4, տող 150-151:

¹² «Հազարապետություն» գործակալության մասին մատենագրական տեղեկություններն ի մի բերված տե՛ս **Մանանդյան Հ.**, Երկեր, հ. Դ, էջ 241-244:

¹³ Տե՛ս **Kramer S. N.** Enmerkar and the Lord of Aratta, Philadelphia, 1952, էջ 22-23, 40-41, **Канева И. Т.** Шумерский героический эпос как исторический источник. ВДИ, 1964, № 4, էջ 212, 218, **Cohen S.** նշվ. աշխ., էջ 126:

¹⁴ Տե՛ս **Дьяконов И. М.** Урартские письма и документы. Л., 1963, № 2, 5, 7:

¹⁵ Տե՛ս **Kramer S. N.** From the Tablets of Sumer, Indian Hills, Falcon, 1956, էջ 232-234, **Berlin A.** նշվ. աշխ., էջ 38-59, ETCSL, 1.8.2.4: «Մինա» չափի միավորը (հավասար է 0,5 կգ) լայն տարածում է ունեցել Առաջավոր Ասիայում: Հայկական միջնադարյան աղբյուրներում այն հայտնի է «մնաս» անվամբ:

¹⁶ Տե՛ս **Wilcke C.** Das Lugalbandaepos, Wiesbaden, 1969, էջ 114-115, ETCSL, 1.8.2.2, տող 253-259:

Պետական իշխանության սուվերենությունը: Արատտայի ներքին վարչատարածքային միավորների մասին որևէ տեղեկություն չունենք: Այն, ըստ երևույթին, պարզ (ունիտար) կառուցվածքով պետություն էր (ի տարբերություն բարդ՝ ֆեդերատիվ կառուցվածքով պետությունների): Իսկ ներքին ու արտաքին հարաբերություններում քրմապետ-արքան ուներ մենաշնորհ, օժտված էր անսահմանափակ իշխանությամբ:

Այսպիսով, Արատտան օժտված է եղել պետությանը բնորոշ բոլոր հատկանիշներով¹⁷ և ունեցել է Ք. ա. 28-27-րդ դարերի համար չափազանց զարգացած պետական համակարգ: Պետության ղեկավարն էր գերագույն քուրմ-արքան, կառավարման բարձրագույն մարմինն Ավագների ժողովն էր, որում նախագահում էր արքան և ուներ վճռորոշ ձայնի իրավունք: Ժողովին վերապահված էր լուծելու արտաքին քաղաքականության, ռազմական ղեկավարման (գուցե և այլ) հարցերը: Առևտրատնտեսական ոլորտը ղեկավարում էր կառավարիչը: Պետությունը հսկողություն էր սահմանել հասարակական աշխատանքներում և վարում էր հարկային քաղաքականություն: Պետական հիմնարկներից հիշատակվում են արքունիքը, շտեմարանները (արքունի և այլ) ու տաճարները:

Նման մակարդակի պետականության առկայությունը Հայաստանում Ք. ա. 28-րդ դարում անհիմն է դարձնում ժամանակին ճանաչում ստացած¹⁸ և մինչ օրս շրջանառվող այն տեսակետը, թե Հայաստանում ռազմական դեմոկրատիայի և վաղ պետական կազմավորումների ժամանակաշրջանը Ք. ա. 2-րդ հազարամյակն է: Ռազմական դեմոկրատիայի դարաշրջանին բնորոշ է ժողովրդական ժողովի, Ավագների ժողովի, ընտրովի առաջնորդ-գորապետի առկայությունը, երբ վերջինս, ձեռք բերելով նաև հոգևոր առաջնորդի պաշտոնը, Ավագների ժողովի հետ սկսում է իր իշխանությանը ենթարկել մեծամասնությանը¹⁹:

Պատելով տեղեկություններից՝ նույնիսկ կարելի է եզրակացնել, որ Արատտան ավելի վաղ է հաղթահարել ռազմական դեմոկրատիայի շրջանը, քան Շումերը: Ըստ շումերական բնագրերի՝ Ք. ա. 28-27-րդ դարերում Շումերում առկա էին ժողովրդական ժողովը, Ավագների ժողովը, քուրմ-արքան, որը և՛ զորապետ էր (անձամբ էր առաջնորդում զորքը), և՛ հոգևոր առաջնորդ, միայն թե առաջնորդի պաշտոնն այլևս ընտրովի չէր, այլ ժառանգական: Ինչպես տեսնում ենք, ռազմական դեմոկրատիայի հետքերը չափազանց թարմ են: Մինչդեռ Արատտայում չի հիշատակվում ժողովրդական ժողովը, արդեն տեղի էր ունեցել հոգևոր առաջնորդի և զորապետի «պաշտոնների» բաժանում. քրմապետ-արքան այլևս զորապետ չէր: Առկա է միայն Ավագների ժողովը, որը, սակայն, ռազմական դեմոկրատիայի ժամանակաշրջանից հետո աշխարհի շատ երկրներում վերածվել է արքային կից

¹⁷ Պետականության գոյության մեկ այլ ցուցիչ կարող է լինել Արատտայում սեփական գրի գործածության մասին տեղեկությունը, որը, դատելով փաստերից, զաղափարագրային համակարգ էր (տես **Kramer S. N.** Enmerkar and the Lord of Aratta, Philadelphia, 1952, էջ 34-35, **Канева И. Т.** նշվ. աշխ., էջ 216, **Vanstiphout H.** նշվ. աշխ., էջ 82-83, ETCSL, 1.8.2.3, տող 454-455):

¹⁸ Տես, օրինակ, «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, էջ 188-196, «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 9, եր., 1983, էջ 582, «Ռազմական դեմոկրատիա» հոդվածը:

¹⁹ Ռազմական դեմոկրատիան, իբրև նախնադարյան հասարակարգից վաղ պետականության և քաղաքակրթության անցման փուլ, սահմանել և մանրամասն ներկայացրել է դեռևս **Л. Գ. Մորգանը** (տես **Морган Л. Г.** Древнее общество, или исследование линий человеческого прогресса от дикости через варварство к цивилизации. Л., 1935):

բարձրագույն ներկայացուցչական ժողովի (Հայաստանում՝ Աշխարհաժողով), որը զարգացման տարբեր աստիճաններով գոյատևել է հազարամյակներ: Եթե ասվածին ավելացնենք Արատտայում բավականին զարգացած պետական համակարգի առկայությունը Ք. ա. 28-րդ դարում, ապա Հայաստանում ռազմական դեմոկրատիայի և վաղ պետական կազմավորումների ժամանակաշրջանը հարկ կլինի հետ տանել մինչև Ք. ա. 4-րդ հազարամյակ: Նույն այդ ժամանակահատվածում են ձևավորվել առաջին պետական միավորները Եգիպտոսում և Միջագետքում:

Անդրադառնալով Արատտայի տարածքային ընդգրկման հարցին՝ որոշ մասնագետներ կարող են առարկել, թե Հայկական լեռնաշխարհի հսկա լեռնաշղթաներով անջրպետված տարածքում չէր կարող նշված ժամանակահատվածում գոյություն ունենալ մեծատարածք պետական միավոր: Պատասխանելով նրանց՝ հարկ է շեշտել, որ լեռնաշխարհում տեղաբնակների մշակութային միասնությունը, ըստ հնագիտության տվյալների, նկատելի է Ք. ա. 6-5-րդ հազարամյակներից սկսած²⁰: Աշխատանքային գործիքների, ճարտարապետական կառույցների միակերպությունը, կենցաղային ու պաշտամունքային առարկաների նույնօրինակությունը (որոշ պաշտամունքային իրեր, շատ տարածված լինելով ողջ լեռնաշխարհում, նրանից դուրս չեն հանդիպում) վկայում են Հայկական լեռնաշխարհի բնակչության ազգակցության մասին: Հենց բնակչության *ազգակցական ընդհանրության գործոն*ն էլ Արատտայի դեպքում ունեցել է վճռորոշ նշանակություն²¹: Այդ գործոնի հույժ կարևորությունն ակնհայտ է Եգիպտոսի և Միջագետքի պատմության համեմատությունից: Եգիպտոսում, որը միատարր ազգաբնակչություն ուներ, առաջին խոշոր պետական միավորները (Վերին և Ստորին Եգիպտոսների թագավորություններ) ստեղծվեցին Ք. ա. 4-րդ հազարամյակի կեսերին, իսկ բազմատարր Միջագետքում՝ Ք. ա. 3-րդի սկզբին:

Ազգակցական ընդհանրության գործոնից զատ՝ Հայաստանում պետականության ձևավորման կարևոր ազդակ է եղել խնդրո առարկա ժա-

²⁰ Տե՛ս **Խանգադյան Է. Վ.**, նշվ. աշխ., էջ 98, **Սարդարյան Ս. Հ.**, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Եր., 1967, էջ 252-253:

²¹ Այդ ազգակցական ընդհանրությունը, դատելով գիտության մերօրյա նվաճումներից, վերաբերում է հնդեվրոպական միասնությանը, երբ հնդեվրոպական մայր ժողովուրդը բնակվում էր նախահայրենիքի տարածքում, որի սահմաններում էր գտնվում Հայկական լեռնաշխարհը (տե՛ս, օրինակ, **Schmidt J.** Die Urheimat der Indogermanen und das europäische Zahlensystem, Weimar, 1890, **Renfrew C.** Archaeology and Language: The Puzzle of Indo-European Origins, New York, 1987, **Гамкрелидзе Т. В., Иванов Вяч. Вс.** Индоевропейский язык и индоевропейцы. Т. 1-2, Тб., 1984 (անգլերեն լրացված թարգմանությունը՝ Berlin-New York, 1995), **Gamkrelidze T. V., Ivanov V. V.** The Ancient Near East and the Indo-European Question: Temporal and Territorial Characteristics of Proto-Indo-European Based on Linguistic and Historico-Cultural Data, "Journal of Indo-European Studies", vol. 13, no. 1 & 2, Spring/Summer, 1985, էջ 3-48, **Gamkrelidze T. V., Ivanov V. V.** The Migration of Tribes Speaking Indo-European Dialects from their Original Homeland in the Near East to their Historical Habitation in Eurasia, "Journal of Indo-European Studies", vol. 13, no. 1 & 2, Spring/Summer 1985, էջ 49-91, **Drews Robert**, The Coming of the Greeks: Indo-European Conquests and the Near East, Princeton, 1987, **Cavalli-Sforza L. L., Cavalli-Sforza F.** The Great Human Diasporas: The History of Diversity and Evolution, New York, 1995, էջ 160-161, **Cavalli-Sforza L. L.** Genes, Peoples and Languages, New York, 2000, էջ 159-165, **Russell D. Gray, Quentin D. Atkinson.** Language-tree divergence times support the Anatolian Theory of Indo-European origin, "Nature", vol. 426, Nov., 2003, էջ 435-439 և այլն):

մանակաշրջանում մետաղամշակության զարգացման բարձր մակարդակը, անհրաժեշտ հումքով մեր լեռնաշխարհի շատ հարուստ լինելը²²:

Ի մի բերելով ասվածը՝ տեսնում ենք, որ Ք. ա. 28-27-րդ դարերում Հայաստանի տարածքում հիշատակված Արատտան եղել է պետություն՝ բնորոշ բոլոր հատկանիշներով, ունեցել է զարգացած պետական համակարգ, պարզ (ունիտար) կառուցվածք և, ըստ կառավարման ձևի, եղել է աստվածապետություն (թեոկրատիա): Այդ պետական կազմավորման ուսումնասիրությունից հանգում ենք այն եզրակացության, որ **Հայաստանում պետականության սկզբնավորման ժամանակաշրջանը ոչ թե Ք. ա. 2-րդ հազարամյակն է, ինչպես ընդունված էր, այլ՝ Ք. ա. 4-րդ հազարամյակը:**

АРТАК МОВСИСЯН, ЕРАНУИ ДАНИЕЛЯН - К проблеме зарождения государственности на Армянском нагорье. - В статье рассматривается проблема возникновения государственности на территории Армянского нагорья.

На основании новейших фактов и новейших исследований авторы приходят к выводу, что образование государственности на Армянском нагорье произошло не во II тысячелетии до н. э. (как было принято считать), а в IV-м.

ARTAK MOVSISYAN, YERANUHI DANIELYAN - On the issue of the rise of the state system on the Armenian Plateau. - The paper discusses the rise of the state system on the territory of the Armenian Plateau.

On the basis of recent facts and research, the authors have reached a conclusion that the state system began to form on the Armenian Plateau not in the II millennium BC (as it was believed) but in the IV millennium BC.

²² Տե՛ս Սիմոնյան Հ., Գնունի Ա., Վաղագույն պետական կազմավորումների առաջացումը Հայկական լեռնաշխարհում (ըստ հնագիտական տվյալների), Հայագիտական միջազգային համաժողով «Հայագիտության արդի վիճակը և նրա զարգացման հեռանկարները», գեկուցումների դրույթներ, Եր., 2003, էջ 76-78, Սիմոնյան Հ., Գնունի Ա., Հայաստանի սոցիալ-քաղաքական իրավիճակը վաղ բրոնզի դարում (ըստ հնագիտական աղբյուրների), ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ժողովածու // «Հայկական լեռնաշխարհը հայոց և համաշխարհային քաղաքակրթության բնօրրան», Եր., 2004, էջ 60-70 (հղումներով հանդերձ):